

ԷՂՎԱՐԴ ՋՐԲԱՇՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Երբ մարդը մեզ հետ է, մեր կողքին է, մենք նրան նայում ենք առօրյայի ուսանյալով, առօրյա հոգսերի, մանր ու մեծ դեպքերի ու բախումների լույսի տակ: Նրա կերպարը վերջնական ամբողջականություն դեռ չունի և չի կարող ունենալ: Մահը բնության վերջին վճռական վիճակահարվածն է մարդու կերպարին, մահից հետո է, որ նա մեր առջև կանգնում է իբրև ամբողջական և ավարտուն կերպար: Եվ այս դեպքում բոլոր մեծ ու փոքր դեպքերը դիտվում են այդ ամբողջության սահմաններում:

Որ Էղվարդ Ջրբաշյանը շատ հարգված ու սիրված մարդ էր, գիտնական, մանկավարժ, երևում էր դեռ տասնամյակներ առաջ: Բայց ահա այսօր, երբ նա արդեն չկա, երբ նրանից հետո մնացել է մի մեծ բաց մեր գրական և հասարակագիտական մտքի բնագավառում, մենք նոր միայն հասկանում ենք, թե ով էր Էղվարդ Ջրբաշյանը: Չարմանալի ամբողջական, կայուն նկարագրի տեր մարդ, որի համար բարոյականությունը դատարկ բառ էր, որի մեջ զարմանալիորեն մնացել էր վանեցի իր ծնողներից ու պապերից ժառանգած ժողովրդական բարձր ավանդապաշտությունը, բարոյական պարզ ու առաջնային սկզբունքների գերակայությունը:

Նրա անվան շուրջը աղմուկ գրեթե չէր լինում. բայց հարգանքը տարիների հետ մեծանում ու խորանում էր: Ես հիշում եմ, թե ինչպես նշեցինք Ջրբաշյանի ծննդյան 75-ամյակը: Ինքը չէր ուզում, հրաժարվել էր ակադեմիայի նախագահության (որի անդամ էր) հորեղանակյան նիստից և մեզ էլ արգելել էր որևէ բան ձեռնարկել: Բայց իրենից զաղտնի նախապատրաստեցինք մի նիստ և իրեն ասացինք՝ միայն երկու օր առաջ: Խուսափել արդեն չէր կարող: Գրականության ինստիտուտի բավական մեծ դահլիճը չտեղավորեց բոլոր նրանց, ովքեր, շատերը հեռվից հեռու, իմացել էին նրա հորեղանակյան մասին և եկել էին շնորհավորելու: Անդրկանգնողներ մեջ կային և անվանի գիտնականներ, և գրականության մարդիկ, և ուսուցիչներ ու լրագրողներ՝ Ջրբաշյանի նախկին ուսանողները, պարզապես գրասեր մարդիկ և այլն: Մեզ համար (զուցե իր համար նույնպես) անս

պասելի էր հանդիսականների այդպիսի բազմությունը. բայց դա ամենաարդար գնահատականն էր նրա մարդկային և գիտական վաստակին...

Ասացի, որ իր անվան շուրջը աղմուկ չէր լինում. ինքը բնութով հեղափոխական չէր, գիտության մեջ միշտ նախապատվությունը տալիս էր դասական մեթոդներին, ուներ ամուր և ամբողջական համոզմունքներ (որոնցից նա, ի սարքերություն շատ-շատերի, չիրաժարվեց նոր հոլների ու հայացքների ազդեցության տակ): Համառոտ ու հետևողական աշխատանքով այդ մեթոդների օգնությամբ նա խորացնում և ընդլայնում էր մեր պատկերացումները գրականության մասին ընդհանրապես և մասնավորապես՝ հայ գրականության մասին: Նրա «Թումանյանի պրեմիերը» դասական գործը իսկապես նոր խոսք էր թումանյանագիտության մեջ և ժամանակին արդարացիորեն բարձր գնահատականի արժանացավ: Առհասարակ այն, ինչ արեց Ջրբաշյանը թումանյանագիտության բնագավառում, անգնահատելի է: Այստեղ կարելի է թվարկել մի ամբողջ շարք աշխատություններ, բայց հիշեմ միայն մի փաստ. Ջրբաշյանի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ իրականացվեց Հովհաննես Թումանյանի երկերի ակադեմիական տասնհատորյակի հրատարակությունը, որը ոչ միայն թումանյանագիտության, այլև՝ հայ տեքստաբանության բարձրագույն նվաճումներից մեկը եղավ:

Իր ճաշակի և նախասիրությունների համար շատ բնորոշ էր մի գիրք, որը նա հրատարակեց տարիներ առաջ՝ «Չորս գագաթ»: Նրա մեջ տպագրված էին հետազոտություններ հայ նոր և նորագույն գրականության չորս դասականների՝ Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Վահան Տերյանի և Եղիշե Չառնցի մասին:



Իհարկե, այս անունները չէին սահմանափակում նրա հետաքրքրությունների շրջանակը. տարբեր տարիներին նա բազմաթիվ ուսումնասիրություններ է տպագրել Ալիշանի, Նալբանդյանի, Սունդուկյանի և ուրիշների մասին, նորերից՝ Միլվա Կապուտիկյանի, նրա սերնդակից գրողների մասին. բայց «Չորս գագաթը» շատ խորհրդանշական էր նրա գրական և գիտական հետաքրքրությունների համար:

Տարիներ առաջ նրան նշանակեցին «Սովետական գրականություն» հանդեսի խմբագիր: Այն ժամանակներում դա շատ բարձր պաշտոն էր: Բայց շուտով հրաժարվեց այդ պաշտոնից: Մեզ դասախոսություններ էր կարդում պետական համալսարանում: Եկավ դասի, հարցրինք, թե ինչու հրաժարվեց: Ի պատասխան՝ պատմեց խմբագրի՝ իր կարիքներում ունեցած մի հանդիպման մասին: Գալիս է ժամանակի ամենասիրված բանաստեղծներից մեկը և գրույցի ընթացքում հայտարարում, որ Չարենցը «պատիկ աղբերն է», իսկ Թումանյանն ու Իսահակյանն էլ իր ոտի թաթերից բարձր չեն (ցույց է տալիս պերճախոս շարժումով իր ոտը): Ինքն էլ ծիծաղելով էր պատմում. բայց զգացվում էր, որ չի կարող հանդուրժել այդպիսի վերաբերմունքը: մեծերի նկատմամբ: Դրանից առաջ էլ եղել էր «Գրական թերթի» խմբագրի տեղակալը: Բայց նրա համար ավելի հարագատ էր գիտական պարբերականների մթնոլորտը: Ինքը հիմնադրեց «Քամբեր Երևանի համալսարանի» հանդեսը և երկար տարիներ խմբագրեց այն՝ մինչև կյանքի վերջը լինելով՝ նրա խմբագրական խորհրդի անդամն ու ամենաբեղուն հեղինակներից մեկը: Շատ ուժ ու եռանդ նվիրեց ակադեմիական «Պատմա-բանասիրական հանդեսին», եղավ նրա խմբագրական մարմնի անդամը տարիներ շարունակ և հեղինակը:

Ընդհանրապես Ջրբաշյանի գործունեության երկու գլխավոր բևեռները եղել են Երևանի պետական համալսարանը, որի և ուսանողն է եղել և հետո՝ տարիներ շարունակ, դասախոսը, որտեղ հիմնադրել է գրականության տեսության և եվրոպական գրականության ամբիոնը, և Գիտությունների պոզային ակադեմիան, որտեղ գրականության ինստիտուտում հիմնադրել և ղեկավարել է գրականության տեսության բաժինը և այդ ինստիտուտի տնօրենն էր կյանքի վերջին ավելի քան երկու տասնամյակներում: Էր խառնվածքը շատ էր համապատասխանում երկուսին էլ: Իրբև դասախոս սիրում էր ուսանողներին և սիրվում էր նրանցից: Հիշում էր իր հարյուրավոր ուսանողներին

ղեմքով, անունով, ում մեջ տեսնում էր գիտական աշխատանքի ընդունակություններ՝ օգնում էր, խրախուսում, մինչև գտնում էին իրենց տեղը: Այսօրվա հայ գրականագետների մեծ մասը նրա նախկին ուսանողներն են: Հայաստանում դժվար է գտնել մի դպրոց, որտեղ գրականության ուսուցիչների մեջ չլինեն նրա ուսանողները:

Մտքի դասական ուղղվածությունն ու մանկավարժական հակումները նրան օգնեցին ստեղծելու բուհական և դպրոցական դասագրքեր գրականության տեսության վերաբերյալ: Գրականության տեսության նրա բուհական դասագիրքը առ այսօր մնում է հայերեն լավագույն ձեռնարկը այդ առարկայի մասին, և առհասարակ Ջրբաշյանը մեծ ծառայություններ ունի Հայաստանում գրական-տեսական հետազոտությունների վարզացման գործում: Նրա աշխատությունների մեջ տեսական հետազոտությունները զգալի բաժին են կազմում: Մասնավոր հակում ուներ տաղաչափության խնդիրների հանդեպ:

Ինչպես ասացի, կյանքի վերջին երկու տասնամյակը կապված էին Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի հետ: Նրա տնօրինության տարիները ինստիտուտի պատմության ամենաբեղմնավոր շրջաններից են: Այդ տարիներին ինստիտուտում ստեղծվեցին և հրատարակվեցին մի քանի տասնյակ գրականագիտական ուսումնասիրություններ, որոնց մի մասը, անկասկած, մնալուն ներդրում էր հայ գրականագիտության մեջ: Այդ տարիներին, բացի Թումանյանի ակադեմիական տասնհատուրյակից, հրատարակվեցին նաև Նալբանդյանի, Վարուժանի, Բաֆֆու, Չարենցի և մյուս դասականների քննական բնագրերը:

Այս վերջին ծանր տարիներին, արդեն խաթարված առողջությամբ, Ջրբաշյանը կարողացավ պահպանել ինստիտուտի աշխատունակությունը, գտնվեցին միջոցներ արդեն պատրաստ աշխատությունները հրատարակելու համար, գրվեցին և գրվում են նոր հետազոտություններ: Ջրբաշյանն ինքն իր պարտքին հավատարիմ լինելու հրաշալի օրինակ էր տալիս. չնայելով ցրտին ու մթին՝ գրեց և հրատարակեց մի քանի նոր գրքեր: Եվ առհասարակ զարմանալի էր նրա նվիրվածությունը հայ գրականությանն ու մշակույթին: Եվ այսօր վստահությամբ կարող ենք ասել, որ Ջրբաշյանը զնաց՝ իր արժանի տեղը գրավելու հայ գրականության ու բանասիրության մեծերի կողքին...

Ա. Կ. ԵՂԻԱՉԱՐՅԱՆ